



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

26 փետրվարի 2020թ. թիվ 223

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 1565 ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 1884 ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության գրասենյակի 2020 թվականի փետրվարի 24-ի թիվ 42/45.10/6661-2020 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ն Ի մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1565 հրամանի թիվ 1 հավելվածի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1884 հրամանի թթ. 1, 2, 7, 14, 17, 20, 23, 24, 27, 30, 31, 32, 40, 43, 44, 48, 52, 53, 56, 59, 60, 67, 68, 70, 75, 81, 84, 86, 91, 93, 99, 105, 110 հավելվածների «3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը» կետում «հինգ տարվա» բառերը փոխարինել «չորս տարվա» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1884 հրամանի թթ. 3, 8, 15, 18, 21, 25, 28, 33, 34, 35, 45, 49, 54, 61, 62, 69, 71, 72, 77, 82, 85, 87, 92, հավելվածների «3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը» կետում «չորս տարվա» բառերը փոխարինել «երեք տարվա» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1565 հրամանի թթ. 2, 3, 4 հավելվածների և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1884 հրամանի թթ. 4, 5, 6, 9, 10, 11, 12, 13, 16, 19, 22, 26, 29, 36, 37, 38, 39, 41, 42, 46, 47, 50, 51, 55, 57, 58, 63, 64, 66, 73, 78, 79, 80, 83, 88-90, 94-98, 100-104, 106-109, 111-113 հավելվածների «3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը» կետում «երեք տարվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒԴԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. փետրվարի 26
ք. Վանաձոր